ազգ ունի յԵրուսաղէմ զիւր սեփհական տեղիս, և վաւերական գրեանքն մեր յայտ առնեն թէ, լեառն Զիթենեաց սեփհական է Հայոց. եթէ Յոյնք ունին հրաման ինչ սակս այնր տեղւոյ՝ մատուսցեն։ Եկեղեցին Բեթղեհէմի բաժանորդութեամբ է երկուց ազգաց, և հարկ էր զմի բանալի արտաքին դրան ունիլ Հայոց իբրեւ սեփհական իրաւունք. բայց Յոյնք անիրաւութեամբ զլացան և ոչ կամեցան տալ զայն. այժմ զհետ մտեալ են առնուլ և զմի բանալի Զիթենեաց լերին՝ որ սեփհական է Հայոց, եւ այս չէ իրաւունք։

Փոխանորդն Յունաց. Պատասխանիք Հայոց վասն Զիթենեաց լերին, և շինութիւնքն ըստ մտաց հրովարտակաց, և սեփհականութիւն տեղւոյն լինիլ Հայոց, 'ի հարկէ ոչ են ճշմարտութեամբ. զի լեառն այն 'ի վաղ ժամանակաց անտի բաժանորդ և ուխտատեղի է երից ազգաց և Մահմետականաց եւս. զի նախ քան զքայքայիլ զմրեթի նորին 'ի շարժէ՝ բանալին էր 'ի ձեռս գիւղական այլազգւոյ միոյ, և չինեցաւ համահաճ հաւանութեամբ երից ազգաց՝ օրինօք Դատարանի և հաստատուն Հէօճճէթիւ, եւ տուաւ յայնժամ իւրաքանչիւրոց մէն մի բանալի, և մին եւս մնաց 'ի ձեռս այլազգեաց. ոչ երբէք լինէր այսպիսի միաբանութիւն, եթէ տեղին լինէր մի միայն սեփհական ազգին Հայոց, և չէր հնար տալ իւրաքանչիւրոց բանալի, յետ այսպէս որոշելոյ զխնդիրն, Հայք 'ի Կոստանդինուպոլիս խաբէյութեամբ մատուցին աղերսագիր և առին հրովարտակ, և այն միայն էր վասն նորոգութեան և պատարագի, և ոչ նորահնար շինութիւնս սահմանել, որք են տախտակամած ճեղունն, նոր սենեակք, կախել պատկերս և կանթեղս, տարածել սփռոցս, և դնել աշտանակս, եւ մշտնջենաւոր թագուլ անդ, որ միայն 'ի ժամ պատարագին պարտ էր մնալ, այս ամենայն հռչակեալէ 'ի լեզուս հասարակութեան։ Եւ այսոքիկ յորժամ քննեցան 'ի ժամանակս վէճին Լատինաց առաջի Քաղաքապետին և գլխաւորաց քաղաքին Ալէմ կոչեցելոց, որոց մենասաանն կից է տեղւոյն՝ Ճարտարապետին և Զիթենեաց լերին Շեյխին և այլոց. յայնժամ յայտնի եղեւ թէ Հայք ոչ են վարեալ ըստ մտաց հրովարտակացն, այլ արտաքոյ նոցին և նորա-